



Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2013

Հաճախակի տրվող հարցեր

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Թրանսփարենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը (այսուհետ՝ Բարոմետր) կոռուպցիայի մասին կարծիքների և դրանում ներթափանցելիության վերաբերյալ համաշխարհային մասշտաբի հանրային կարծիքի միակ հարցումն է: 2013 թ.-ի Բարոմետրը, որը հանդիսանում է թվով ութերորդ հրապարակումը, արտացոլում է 107 երկրներում հարցված 114,270 անձանց կարծիքները, և ներկա դրությամբ ըստ երկրների թվի այն ունի մինչ այժմ եղածներից ամենամեծ ընդգրկումը:

2. Ինչպիսի՞ հարցեր են ներառված հարցաթերթիկում:

Բարոմետրում ներառված են ընդհանուր հարցեր մարդկանց կողմից իրենց երկրներում առկա կոռուպցիայի ընկալման վերաբերյալ և որ հաստատություններում/ուրորտներում է կոռուպցիայի հիմնախնդիրն առավել լուրջ: Այն նաև չափում է, թե վերջին մեկ տարվա ընթացքում քաղաքացիները որքանով են առնչվել կոռուպցիային՝ հարցման մեջ ներառված 8 տարբեր ծառայություններ ստանալիս: Հարցումը պարզում է, թե մարդիկ որքանով են վստահում կոռուպցիայի դեմ պայքարում իրենց երկրների իշխանությունների գործադրած ջանքերի արդյունավետությանը, ինչպես նաև թե որքանով են նրանք պատրաստ անձամբ ներգրավվել կոռուպցիայի դեմ պայքարում: 2013 թ.-ի Բարոմետրում առաջին անգամ ներառված են հարցեր՝ պարզելու համար նեղ խմբակային շահեր հետապնդող փոքրաթիվ, բայց ազդեցիկ խմբերի ազդեցության և անձնական կապերի կարևորության ընկալումը առանձին երկրների հանրությունների կողմից:

3. Ո՞վ և ե՞րբ է անցկացրել ներկա հարցումը:

2013 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի հարցումը ԹԻ անունից անցկացվել է հանրային կարծիք ուսումնասիրող WIN/GIA (Համաշխարհային անկախ ցանց/Գեյափ Ինթերնեշնլ Ասոցիացիա) ընկերության կողմից, որն իրենից ներկայացնում է հանրային կարծիք ուսումնասիրող ընկերությունների համաշխարհային ցանց: Բանգլադեշում, Կիպրոսում, Գանայում, Քենիայում, Ռուանդայում և Չիլիում:

հարցումն անցկացրել են ԹԻ-ի տեղական մասնաճյուղերը, Մոնոլոլիայում՝ Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային անկախ գործակալությունը, իսկ Լյուքսեմբուրգում՝ TNS-ILRES կարծիք ուսումնասիրող ընկերությունը:

Դաշտային աշխատանքները իրականացվել են 2012 թ. սեպտեմբերի և 2013 թ. մարտի միջև ընկած ժամանակահատվածում: Կիրառվել են դեմ առ դեմ, հեռախոսային և օն-լայն (ինտերնետով) հարցազրույցների մեթոդները:

Հարցաթերթիկի կառուցվածքը և բովանդակությունը ստուգվել է Կոռուպցիայի, հետազոտական մեթոդների, Էկոնոմետրիկայի և վիճակագրության ոլորտների առաջատար մասնագետներից կազմված ԹԻ-ի Համաթվերի խորհրդատվական կոմիտեի կողմից: Տվյալների ճշտությունը և որակը ստուգվել է WIN/GIA կենտրոնական գրասենյակի կողմից: Հարցման արդյունքները հաշվարկվել են ԹԻ-ի Բեռլինի Հետազոտական բաժնի կողմից և ճշտվել են հարցումների գծով անկախ մասնագետի կողմից:

4. Ո՞ր երկրները/տարածքներն են ներառված 2012 թ. Բարոմետրում

Այս տարվա Բարոմետրում ներառված է 107 երկիր: 2010-2011 թթ. համակցված հարցման մեջ ընդգրկված էր 100 երկիր, իսկ 2009 թ. հարցման մեջ՝ 69 երկիր: Չկա որևէ սահմանափակում հարցման մեջ երկրներ/տարածքներ ընդգրկելու հարցում: ԹԻ-ն հուսով է, որ ապագայում էլ ավելի մեծ թվով երկրներ կընդգրկվեն հարցման մեջ:

5. Ինչպե՞ս կարող են օգտագործվել Բարոմետրի արդյունքները:

Բարոմետրը հանդիսանում է կոռուպցիայի վերաբերյալ հասարակության կարծիքների և նրանում քաղաքացիների ներքաշվածության վերաբերյալ եմպիրիկ տվյալների հարուստ աղբյուր:

Հանրային քաղաքականություն մշակողները կարող են օգտագործել Բարոմետրի տվյալները՝ ավելի լավ հասկանալու, թե ինչ չափով են տարբեր հաստատությունները և ծառայություններն ընկալվում որպես կոռումպացված և պարզելու, թե դրանցից որոնցում են առավել հաճախ տրվում կաշառքներ: Դա հնարավորություն կտա հակակոռուպցիոն քաղաքականության և ծրագրերի կիրարկման միջոցով արդյունավետ կերպով թիրախավորելու տվյալ երկրում առավել լուրջ կոռուպցիոն ռիսկեր պարունակող հաստատությունները և ծառայությունները: Այժմ, երբ արդեն անցկացվել է Բարոմետրի թվով ութերորդ հարցումը, հնարավորություն կա ժամանակային

կտրվածքով համեմատելու առանցքային հարցերին վերաբերող արդյունքները և դիտարկելու ազգային մակարդակում կոռուպցիայի մակարդակի փոփոխությունների միտումները:

Քաղաքացիական հասարակության կառույցները և լրագրողները կարող են օգտագործել հարցումը որպես կոռուպցիայի վերաբերյալ իրենց երկրների քաղաքացիների կարծիքների արտացոլում: Բարոմետրի տվյալները կարող են օգտագործվել՝ բարձրացնելու համար մարդկանց առօրյա կյանքի վրա կոռուպցիայի ազդեցության վերաբերյալ իրազեկությունը: Այն կարող է նաև օգտագործվել կոռուպցիայի դեմ պայքարում մարդկանց ներգրավելու նպատակով՝ վեր հանելով նրանց ցանկությունը անձամբ մասնակից դառնալու այդ պայքարին, օրինակ, կոռուպցիոն դեպքերի մասին բարձրաձայնելու միջոցով:

Մասնավոր հատվածը կարող է օգտագործել Բարոմետրի արդյունքները՝ ավելի լավ հասկանալու համար իր երկրի քաղաքական իրավիճակը, ինչպես նաև, թե որքանով են ուժեղ նրա ազգային ու պետական կառույցները:

Գիտահետազոտական ուսումնասիրություններ անցկացնողները կարող են օգտագործել Բարոմետրի տվյալները՝ ուսումնասիրելու կոռուպցիային և կաշառակերությանը նպաստող գործոնները և դրանց հետևանքները մեծ թվով երկրներում: Մի շարք կարևոր հարցեր ուսումնասիրելու համար Բարոմետրն առաջարկում է երկրների մեծ ընտրություն և ժամանակագրական առումով արժեքավոր տվյալներ: Այն, հետևաբար հանդիսանում է տվյալների հարուստ և եզակի աղբյուր ակադեմիական հանրության համար:

6. Համեմատելի՞ են, արդյոք, Բարոմետրի տարբեր տարիների տվյալները:

Այո: Եթե տարբեր տարիներին Բարոմետրում ներառված հարցերը կրկնվում են, ապա այն հնարավորություն է տալիս կատարել ժամանակային ուղղակի համեմատություններ: Ներկա Բարոմետրը թվով ութերորդ հարցումն է, և հետևաբար, հնարավորություն է տալիս գնահատելու հանրության կողմից առավել կոռումպացված ընկալվող հաստատությունների, կոռուպցիայի դեմ պայքարում իշխանությունների ջանքերի արդյունավետության և որոշակի հանրային ծառայություններ ստանալու համար կաշառք վճարող քաղաքացիների չափաբանակների առումով միտումները:

Հարցման ժամանակ տրվող հարցերը տարեցտարի փոփոխվում են՝ պարբերաբար ընդգրկվելով կամ դուրս մնալով հարցաթերթիկից: Հետևաբար,

Ժամանակային կտրվածքով համեմատելի են միայն այն հարցերի վերաբերյալ տվյալները, որոնք կրկնվել են տարբեր տարիների Բարոմետրի հարցումներում:

Բարոմետրի նախորդ հարցումների տվյալները տես www.transparency.org/policy%20research/surveys_indices/qcb:

7. Ի՞նչ տարբերություններ կան Բարոմետրի և ԹԻ-ի Կոռուպցիայի ընկալման համաթվի և ԹԻ-ի Կաշառք վճարողների համաթվի միջև:

Բարոմետրը հանրային կարծիքի ուսումնասիրություն է, որը վեր է հանում քաղաքացիների տեսակետները կոռուպցիայի և իրենց կյանքի վրա դրա ազդեցության, ներառյալ նաև կաշառատվության մեջ նրանց ներքաշվածության, վերաբերյալ: Միևնույն ժամանակ, և՛ Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՅ), և՛ Կաշառք վճարողների համաթիվը (ԿՎՅ) վեր են հանում փորձագետների կարծիքները:

ԿԸՅ-ն արտացոլում է հանրային ոլորտում և քաղաքականության մեջ առկա՝ կոռուպցիայի վերաբերյալ տեղեկացված դիտորդների կարծիքը: ԿԸՅ վերաբերյալ տեղեկատվության համար տես www.transparency.org/policy%20research/surveysindices/cpi:

ԿՎՅ-ի արդյունքները ստացվում են առևտրային ընկերությունների ղեկավարների հարցման միջոցով, որը դասակարգում է աշխարհի տնտեսապես առավել ազդեցիկ երկրները՝ ելնելով նրանից, թե այդ երկրների ընկերություններն ինչ հավանականությամբ են կաշառք տալիս արտասահմանում գործունեություն ծավալելիս: ԿՎՅ վերաբերյալ տեղեկատվության համար տես www.transparency.org/policy_research/surveysindices/bpi: